

«ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ I»-ի տնօրենների խորհրդի
2017 թվականի մայիսի 25-ի թիվ 25.05.2017-01 Լ որոշման

ԿԱՐԳ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԳՐԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՄԻՋև ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ I-Ի ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ԲԱՇԽՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույն Կարգը սահմանում է «ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ I» արժեթղթավորման հիմնադրամի մնացորդային արժեքում մասնակցության վկայագրերից յուրաքանչյուրի սեփականատիրոջ մասնաբաժնի հաշվարկման մեխանիզմները և սկզբունքները:
- 1.2. Սույն Կարգում օգտագործված հետևյալ եզրույթները ունեն ստորև բերված նշանակությունները.
 - 1.2.1. **Հիմնադրամ՝** ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ I արժեթղթավորման հիմնադրամ,
 - 1.2.2. **Կոնկրետ դասի վարկային պորտֆել (վարկեր)՝** յուրաքանչյուր դասի (A, B, C, D, E դասի դրամային կամ A, B, C դասի դոլարային) մասնակցության վկայագրի սկզբնական գնորդի կողմից Հիմնադրամին վաճառված վարկային պորտֆել (վարկեր),
 - 1.2.3. **Կոնկրետ դասի պարտատոմսեր՝** Հիմնադրամի կողմից թողարկված ընդհանուր պարտատոմսերի մաս, որը համապատասխանում է յուրաքանչյուր դասի (A, B, C, D, E դասի դրամային կամ A, B, C դասի դոլարային) վարկային պորտֆելին և հաշվարկված է համաձայն սույն Կարգի,
 - 1.2.4. **Կոնկրետ դասի մնացորդային արժեք՝** Հիմնադրամի ընդհանուր մնացորդային արժեքի մաս, որը վերագրված է յուրաքանչյուր դասի (A, B, C, D, E դասի դրամային կամ A, B, C դասի դոլարային) մասնակցության վկայագրին և հանդիսանում է դրա սեփականատիրոջ մասնաբաժինը,
 - 1.2.5. **Ազդագիր՝** փաստաթուղթ, որը հաստատվել է Հիմնադրամի տնօրենների խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի որոշմամբ և որի հիման վրա իրականացվել է Հիմնադրամի կողմից թողարկված պարտատոմսերի հրապարակային առաջարկը:
- 1.3. Սույն Կարգում մեծատառ սկզբնատառերով գրված եզրույթները, որոնց նշանակությունն այլ կերպ սահմանված չէ սույն Կարգում ունեն Ազդագրով սահմանված նշանակությունը:

2. ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ

2.1 Հիմնադրամի կողմից կատարված կամ ստացված ցանկացած վճարում, հաշվապահական ձևակերպում կամ որևէ գործողություն, որը ուղղակի կամ անուղղակի կերպով ազդում է Հիմնադրամի մնացորդային արժեքի վրա, գնահատվում է յուրաքանչյուր դասի մնացորդային արժեքի որոշման տեսանկյունից: Սույն կարգի Հավելվածում ներկայացված է այդպիսի գործողությունների բաշխումը լուսաբանող օրինակ:

2.2 Այն դեպքում, երբ որևէ գործողություն ամբողջապես և ուղղակիորեն առնչվում է միայն Կոնկրետ դասի վարկային պորտֆելին (վարկերին) և(կամ) միայն դրա Նախաձեռնողին, ապա այդ գործողությունը կատարվում է բացառապես տվյալ դասի մնացորդային արժեքի հաշվին: Այդպիսի գործողություններ են.

- վարկային պորտֆելների ձեռքբերումը և Նախաձեռնողների կողմից վարկերի հետ գնումը,
- մասնակցության վկայագրերի վաճառքը,
- Սկզբնական պահուստային հիմնադրամի ձևավորումը և դրանց հետ վերադարձը Նախաձեռնողներին,
- վարկերի գծով կատարված գործողությունները (վարկի մայր գումարի, տոկոսի, տույժի վճարում), ներառյալ՝ Սպասարկողների կողմից հավաքագրված գումարների փոխանցումը Հիմնադրամին,
- սպասարկման վճարի կատարումը,
- մասնակցության վկայագրերի ռեեստրի վարման վճարի կատարումը,
- արժեթղթերի (մասնակցության վկայագրերի) հաշվի պահպանման վճարի կատարումը,
- արտարժույթի ձեռք բերումն ու վաճառքը:

2.3 Հաստատուն (ֆիքսված) վճարները, ինչպես նաև փոփոխուն վճարների հաստատուն մասերը բաշխվում են բոլոր Կոնկրետ դասի մնացորդային արժեքների միջև համամասնորեն՝ ըստ Հիմնադրամի կողմից ձեռք բերված ընդհանուր վարկային պորտֆելում ձեռքբերման օրվա դրությամբ (14 դեկտեմբերի 2015թ.) յուրաքանչյուր Կոնկրետ դասի վարկային պորտֆելի ունեցած կշռի: Դուլարային վարկային պորտֆելների հաշվարկման համար կիրառվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2015թ. դեկտեմբերի 14-ին հրապարակված փոխարժեքը: Որևէ Կոնկրետ դասի վարկային պորտֆելի ամբողջական մարման դեպքում տվյալ Կոնկրետ դասի մնացորդային արժեքը մարման օրվան հաջորդող ամսվա սկզբից սկսած այլևս չի մասնակցում հաստատուն վճարների բաշխմանը: Հաստատուն վճարները ներառում են.

- Պարտատոմսերի սեփականատերերի գործակալի վճարը,
- աուդիտի վճարը,
- պարտատոմսերի ցուցակման վճարը,
- պարտատոմսերի ցուցակման պահպանման վճարի հաշվարկում հաստատուն մասը (75,000 դրամը):

2.4 Փոփոխուն վճարները, որոնք հաշվարկվում են պարտատոմսերի մնացորդների վրա, բաշխվում են բոլոր Կոնկրետ դասի մնացորդային արժեքների միջև՝ հաշվի առնելով յուրաքանչյուր Կոնկրետ դասի պարտատոմսերի մնացորդները և պահպանելով վճարների հաշվարկման տրամաբանությունը: Փոփոխուն վճարները ներառում են.

- կառավարման վարձը,

- Շուկա ստեղծողի վճարը,
- պարտատոմսերի ցուցակման (պահպանման) վճարի փոփոխուն մասը,
- պարտատոմսերի ռեեստրի վարման վճարը,
- ԱՄՆ ՄՁԳ երաշխիքի օգտագործման վճարը,
- պարտատոմսերի տեղաբաշխումից հասույթը,
- պարտատոմսերի մայր գումարի վճարումը,
- արժեկտրոնի վճարումը:

2.5 Հիմնադրամի դրամային և դոլարային բանկային հաշիվների շարժի և մնացորդների հաշվառումն իրականացվում է ըստ յուրաքանչյուր Կոնկրետ դասի մնացորդային արժեքին վերագրվող մասի: Վերջիններս որոշվում են՝ հաշվի առնելով ստացված և փոխանցված գումարներում յուրաքանչյուր Կոնկրետ դասի մնացորդային արժեքի՝ սույն կարգի համաձայն որոշված մասնակցության չափը: Դրամային և դոլարային բանկային հաշիվների մնացորդները որոշվում են օրական կտրվածքով, իսկ հաշիվների վրա կուտակվող տոկոսագումարները բաշխվում են ըստ ընդհանուր մնացորդում յուրաքանչյուրի՝ տվյալ օրը ունեցած կշռի:

2.6 Վճարվող շահութահարկում յուրաքանչյուր Կոնկրետ դասի մնացորդային արժեքին վերագրվող մասը որոշվում է ըստ հարկվող բազայում յուրաքանչյուրի ունեցած կշռի:

2.7 Բանկային փոխանցման միջնորդավճարները, որոնք գանձվում են դոլարային փոխանցումներ կատարելիս, բաշխվում են յուրաքանչյուր Կոնկրետ դոլարային դասի մնացորդային արժեքների միջև՝ ըստ փոխանցվող գումարում յուրաքանչյուրի մասնակցության չափի՝ բացառությամբ ԱՄՆ ՄՁԳ երաշխիքի օգտագործման վճարի փոխանցումից գանձվող միջնորդավճարի, որը բաշխվում է նաև դրամային բոլոր Կոնկրետ դասի մնացորդային արժեքների միջև:

2.8 Դրամական հոսքերի ազդեցությունը Կոնկրետ դասի մնացորդային արժեքի վրա որոշելիս՝ գումարներն այլ արժույթով արտահայտելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է տվյալ օրը ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքը:

«ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ I»-ի տնօրենների խորհրդի

2017 թվականի ապրիլի 28-ի թիվ 28.02.2017-02 Լ որոշմամբ հաստատված
Մասնակցության վկայագրերի սեփականատերերի միջև մնացորդային արժեքի բաշխման կարգի

ՕՐԻՆԱԿ

Ենթադրենք 30.09.2016թ. դրությամբ բոլոր Կոնկրետ դասի մասնակցության վկայագրերի,
մնացորդային արժեքների և դրա տարրերի բաշխվածությունը ունի հետևյալ տեսքը.

Դրամային ՄՎ դասեր	ՄՎ Անվանակա ն արժեք	Սկզբնական վարկային պորտֆել	Բանկային հաշվի մնացորդ	Վարկային պորտֆել	Պարտատոմ սեր	Մնացորդայ ին արժեք*
A դաս	16,400,000	164,000,000	14,700,000	89,500,000	73,000,000	31,200,000
B դաս	3,500,000	35,000,000	3,000,000	8,600,000	5,000,000	6,600,000
C դաս	6,800,000	68,000,000	5,400,000	34,800,000	28,000,000	12,200,000
D դաս	19,800,000	198,000,000	15,100,000	103,000,000	83,200,000	34,900,000
E դաս	3,100,000	31,000,000	2,700,000	17,500,000	14,500,000	5,700,000
Ընդամենը	49,600,000	496,000,000	40,900,000	253,400,000	203,700,000	90,600,000

Դոլարային ՄՎ դասեր	ՄՎ Անվան. արժեք	Սկզբնակ ան վարկային պորտֆել	Դոլարային բանկային հաշիվ	Դրամային բանկային հաշիվ	Վարկային պորտֆել	Պարտատ ոմսեր	Մնացորդ ային արժեք*
A դաս	27,400	274,000	17,200	2,100,000	142,300	115,000	44,500
B դաս	39,300	393,000	34,000	3,100,000	254,200	214,900	63,300
C դաս	59,400	594,000	37,700	2,800,000	209,800	150,500	97,000
Ընդամենը	126,100	1,261,000	88,900	8,000,000	606,300	480,400	204,800

*Մնացորդային արժեք = Բանկային հաշվի մնացորդ + Վարկային պորտֆել – Պարտատոմսեր

Առաջադրանք

Անհրաժեշտ է որոշել Հիմնադրամի կողմից կատարված հետևյալ գործողությունների գումարային
մեծությունը և դրանցում A դասի դրամային և B դասի դոլարային մնացորդային արժեքներին
վերագրված մասերը:

1. Շաբաթվա ընթացքում A դասի դրամային վարկային պորտֆելի գծով կատարվել են վարկի
մայր գումարի 5 միլիոն և տոկոսագումարի 300,000 դրամ գումարի վճարում, իսկ B դասի
դոլարային վարկային պորտֆելի գծով՝ համապատասխանաբար 12,000 դոլար և 343,000
դրամ գումարի վճարում, որոնք Սպասարկողը փոխանցել է Հիմնադրամին հոկտեմբերի 8-
ին:
2. Հոկտեմբերի 10-ին վճարվել է Պարտատոմսերի սեփականատերերի գործակալին 70,000
դրամ:
3. Հոկտեմբերի 11-ին վճարվել է պարտատոմսերի ցուցակման պահպանման վճարը:

4. Հոկտեմբերի 16-ին վճարվել է կառավարման եռամսյակային վարձը՝ Վարկային պորտֆելի և մասնակցության վկայագրի մնացորդների տարեկան 0.8%-ի չափով:
5. Հոկտեմբերի 22-ին հաշվարկվել և կատարվել է դրամային և դոլարային պարտատոմսերի մասնակի մարում՝ ընդհանուր 58,000,000 դրամ և 100,000 դոլար գումարի չափով, և արժեկտրոնի եռամսյակային վճարում: A դասի դրամային և B դասի դոլարային վարկային պորտֆելների գծով եռամսյակի ընթացքում կատարվել են համապատասխանաբար 14,500,000 դրամ և 40,000 դոլար վարկի մարումներ:
6. Հոկտեմբերի 22-ին դոլարային փոխանցումները կատարելու համար բանկը գանձել է միջնորդավճար՝ 30,000 դրամի չափով:
7. Հիմնադրամը հոկտեմբերի 24-ին 486 փոխարժեքով անկանխիկ գնում է 1,500 դոլար՝ B դասի մնացորդային արժեքի արտարժույթի ռիսկը նվազեցնելու համար:
8. Հոկտեմբերի 31-ին բանկը փոխանցում է Հիմնադրամի դրամային և դոլարային հաշիվների վրա հաշվեգրված տոկոսագումարը՝ հաշվարկված համապատասխանաբար 11% և 2.5% տարեկան տոկոսադրույքով՝ տարին ընդունելով 360 օր:

Հաշվարկ

1. Հոկտեմբերի 8-ի դրությամբ՝

- A դասի վարկային պորտֆել = $84,500,000 = 89,500,000 - 5,300,000$

A դասի բանկային հաշիվ = $20,000,000 = 14,700,000 + 5,000,000 + 300,000$

A դասի մնացորդային արժեք = $31,500,000 = 20,000,000 + 84,500,000 - 73,000,000$

- B դասի վարկային պորտֆել = $242,200 = 254,200 - 12,000$

B դասի դոլարային բանկային հաշիվ = $46,000 \text{ դոլ} = 34,000 + 12,000$

B դասի դրամային բանկային հաշիվ = $3,443,000 \text{ դր} = 3,100,000 + 343,000$

B դասի մնացորդային արժեք = $73,300 + 3,443,000 / \text{փոխարժեք}_{08.10.2016թ} = 46,000 + 3,443,000 / \text{փոխարժեք}_{08.10.2016թ} + 242,200 - 214,900$

2. Հոկտեմբերի 10-ի դրությամբ՝

- A դասին վերագրվող գործակալի վճ. = $10,367.4 = \text{կշիռ} * 70,000$

$\text{Կշիռ} = A \text{ դասի վարկային պորտֆել} / (\text{դրամային պորտֆել} + \text{դոլարային պորտֆել} * \text{փոխարժեք}_{13.12.2015թ}) \approx 14.81\%$

A դասի բանկային հաշիվ = $19,989,632.60 = 20,000,000 - 10,367.40$

A դասի մնացորդային արժեք = $31,489,632.60 = 31,500,000 - 10,367.40$

- B դասին վերագրվող գործակալի վճ. = $12,044 \text{ դր} = \text{կշիռ} * 70,000$

$\text{Կշիռ} = B \text{ դասի վարկային պորտֆել} / (\text{դրամային պորտֆել} / \text{փոխարժեք}_{13.12.2015թ} + \text{դոլարային պորտֆել}) \approx 17.21\%$

B դասի դոլարային բանկային հաշիվ = $46,000 \text{ դոլ}$

B դասի դրամային բանկային հաշիվ = $3,430,956 \text{ դր} = 3,443,000 - 12,044$

B դասի մնացորդային արժեք = $73,300 + 3,430,956 / \text{փոխարժեք}_{10.10.2016թ}$

3. հոկտեմբերի 11-ի դրությամբ՝

- A դասին վերագրվող ցուց. պահպ. վճ. = $15,519.50 = (14.81\% * 75,000 + 0.0025\% * 73,000,000) * 1.2$

Ընդհանուր վճար = $75,000 + 0.0025\% * \text{դրամային պարտատոմսի մնացորդ} + \text{ԱԱՀ}$
Կշիռ $\approx 14.81\%$

A դասի բանկային հաշիվ = $19,974,113.10 = 19,989,632.60 - 15,519.50$

A դասի մնացորդային արժեք = $31,474,113.10 = 31,489,632.60 - 15,519.50$

- B դասին վերագրվող ցուց. պահպ. վճ. = $21,144.40 \text{ դր} = (17.21\% * 75,000 + 0.0025\% * 14,900 * 480) * 1.2$

Ընդհանուր վճար = $(75,000 + 0.0025\% * \text{դոլարային պարտատոմսի մնացորդ} * \text{փոխարժեք}_{30.09.16թ.} + \text{ԱԱՀ})$

Կշիռ $\approx 17.21\%$

Փոխարժեք $_{30.09.16թ.} = 480$

B դասի դոլարային բանկային հաշիվ = $46,000 \text{ դոլ}$

B դասի դրամային բանկային հաշիվ = $3,409,811.60 \text{ դր} = 3,430,956 - 21,144.40$

B դասի մնացորդային արժեք = $73,300 + 3,409,811.60 / \text{փոխարժեք}_{11.10.2016թ.}$

4. հոկտեմբերի 16-ի դրությամբ՝

- A դասին վերագրվող կառավարման վարձ = $178,310.10 = 0.8\% * (73,000,000 + 16,400,000) / 365 * 91$

Վճար = $0.8\% * (\text{դրամային պարտատոմսի միջին մնացորդ} + \text{մասնակցության վկայագրեր}) / 365 * \text{եռամսյակի օրերի քանակ}$

A դասի բանկային հաշիվ = $19,795,803 = 19,974,113.10 - 178,310.10$

A դասի մնացորդային արժեք = $31,295,903 = 31,474,113.10 - 178,310.10$

- B դասին վերագրվող կառավարման վարձ = $244,377.40 \text{ դր} = 0.8\% * (214,900 + 39,300) / 365 * 91 * 482$

Վճար = $0.8\% * (\text{դոլարային պարտատոմսի միջին մնացորդ} + \text{մասնակցության վկայագրեր}) / 365 * \text{եռամսյակի օրերի քանակ} * \text{փոխարժեք}_{\text{հաշվարկի օր}}$

փոխարժեք $_{\text{հաշվարկի օր}} = 482$

B դասի դոլարային բանկային հաշիվ = $46,000 \text{ դոլ}$

B դասի դրամային բանկային հաշիվ = $3,155,611.60 \text{ դր} = 3,409,811.60 - 244,377.40$

B դասի մնացորդային արժեք = $73,300 + 3,155,611.60 / \text{փոխարժեք}_{16.10.2016թ.}$

5. հոկտեմբերի 22-ի դրությամբ՝

- A դասի պարտատոմսի մասնակի մարում = $14,500,000$

A դասի պարտատոմսի արժեկտրոնի մարում = $2,737,500 = 73,000,000 * 15\% / 4$

Արժեկտրոն = դրամային պարտատոմսի մնացորդ * $15\% / 4$

A դասի բանկային հաշիվ = $2,558,303 = 19,795,803 - 14,500,000 - 2,737,500$

A դասի մնացորդային արժեք = $14,058,403 = 31,295,903 - 14,500,000 - 2,737,500$

• B դասի պարտատոմսի մասնակի մարում = 40,000

B դասի պարտատոմսի արժեկտրոնի մարում = $2,219,379.80 \text{ դր} = 214,900 * 8.5\% / 4 * 486$

Արժեկտրոն = դոլարային պարտատոմսի մնացորդ * $8.5\% / 4 * \text{փոխարժեք}_{21.10.2016 \text{թ.}}$

Փոխարժեք_{21.10.16թ.} = 486

B դասի դոլարային բանկային հաշիվ = $6,000 \text{ դոլ} = 46,000 - 40,000$

B դասի դրամային բանկային հաշիվ = $936,231.80 \text{ դր} = 3,155,611.60 - 2,219,379.80$

B դասի մնացորդային արժեք = $73,300 + 936,231.80 / \text{փոխարժեք}_{22.10.2016 \text{թ.}}$

6. հոկտեմբերի 22-ի դրությամբ՝

• B դասին վերագրվող բանկային միջնորդավճար = $12,000 \text{ դր} = 40,000 / 100,000 * 30,000$

B դասի պարտատոմսի մասնակի մարում / ընդամենը պարտատոմսի մասնակի մարում * միջնորդավճար

B դասի դոլարային բանկային հաշիվ = 6,000 դոլ

B դասի դրամային բանկային հաշիվ = $924,231.80 \text{ դր} = 936,231.80 - 12,000$

B դասի մնացորդային արժեք = $73,300 + 924,231.80 / \text{փոխարժեք}_{22.10.2016 \text{թ.}}$

7. Հոկտեմբերի 24-ի դրությամբ՝

B դասի դոլարային բանկային հաշիվ = $7,500 \text{ դոլ} = 6,000 + 1500$

B դասի դրամային բանկային հաշիվ = $195,231.80 \text{ դր} = 924,231.80 - 1,500 * 486$

B դասի մնացորդային արժեք = $74,800 + 195,231.80 / \text{փոխարժեք}_{24.10.2016 \text{թ.}}$

8. Հոկտեմբերի 31-ի դրությամբ՝

• A դասի բանկային հաշվի մնացորդները և հաշվեգրված տոկոսագումարները հոկտեմբեր ամսվա ընթացքում

Ամսաթիվ	Մնացորդ	Օրերի քանակ	Հաշվ. Տոկ.
30/09/16	14,700,000		
08/10/16	20,000,000	8	35,933.30
10/10/16	19,989,633	2	12,222.20
11/10/16	19,974,113	1	6,107.90
16/10/16	19,795,803	5	30,516.00
22/10/16	2,558,303	6	36,292.30
31/10/16	2,558,303	9	7,035.30
Ընդամենը		31	128,107.00

A դասի բանկային հաշիվ = 2,686,410 = 2,558,303 + 128,107

A դասի մնացորդային արժեք = 14,186,510 = 14,058,403 + 128,107

- B դասի բանկային հաշվի մնացորդները և հաշվեգրված տոկոսագումարները հոկտեմբեր ամսվա ընթացքում

Դրամային հաշիվ

Ամսաթիվ	Մնացորդ	Օրերի քանակ	Հաշվ. Տոկ.
30/09/16	3,100,000		
08/10/16	3,443,000	8	7,577.80
10/10/16	3,430,956	2	2,104.10
11/10/16	3,409,812	1	1,048.30
16/10/16	3,155,612	5	5,209.40
22/10/16	924,232	6	5,785.30
24/10/16	195,232	2	564.80
31/10/16	195,232	7	417.60
Ընդամենը		31	22,707.30

Դոլարային հաշիվ

Ամսաթիվ	Մնացորդ	Օրերի քանակ	Հաշվ. Տոկ.
30/09/16	34,000		
08/10/16	46,000	8	18.89
10/10/16	46,000	2	6.39
11/10/16	46,000	1	3.19
16/10/16	46,000	5	15.97
22/10/16	6,000	6	19.17
24/10/16	7,500	2	0.83
31/10/16	7,500	7	3.65
Ընդամենը		31	68.09

B դասի դոլարային բանկային հաշիվ = 7,568.09դոլ = 7,500 + 68.09

B դասի դրամային բանկային հաշիվ = 217,939.10դր = 195,231.80 + 22,707.30

B դասի մնացորդային արժեք = 74,868.90 + 217,939.10/փոխարժեք_{31.10.2016թ.}